Արձանագրություն N 10

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի

Օրակարգ

1. **Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովին կից Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական աշխատանքային խումբ ստեղծելու, կազմը հաստատելու և հետագա աշխատանքները համակարգելու մասին**

/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ

Ա.Թանաշյան /

2. **«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ներկայացում**

/ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ

Կ.Սարիբեկյան/

3. **Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման ուղղությամբ ՄԱԲՀ-ի աշխատանքների ներկայացում**

/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ

Գ.Հայրապետյան/

4. **Կանանց ռեսուրսային կենտրոնի և Ցյուրիխի համալսարանի համագործակցությամբ Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների խորքային պատճառների ուսումնասիրություն հետազոտության անցկացման մասին**

/ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի պատասխանատու

Ա.Այվազով /

5. **«Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների դեմ պայքար» ծրագրի ներկայացում**

/«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոն

Վ.Ասատրյան/

6. **Ելույթներ, մտքերի փոխանակում**

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ
Ծ. Հարությունյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու
Մ. Ներսիսյան	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ներակայացուցիչ
Ա. Հովհաննիսյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի պատասխանատու
Ա. Այվազով	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի պատասխանատու
Ն. Դուրյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ
Մ. Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորիգի վարչության գլխավոր մասնագետ
Գ. Աբրահամյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության քաղաքականության ծրագրերի վարչության աղետների ռիսկի գնահատման բաժնի պետ
Ն. Արզունյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության ՊԱՀԿ և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ
Ա. Սուքիասյան	ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ-մասնագետ
Գ. Աղանյան	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
Վ. Ասատրյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ
Ա. Գալստյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» վերլուծական կենտրոնի տնօրեն
Ա. Սաֆարյան	ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ
Ռ. Ղազարյան	Վոլդ Վիժըն Հայաստան հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
Ի. Սարգսյան	«Սեյվ դը չիլդրեն» միջազգային կամակերպության ծրագրերի ղեկավար
Գ. Փանոսյան	«Սեյվ դը չիլդրեն» միջազգային կամակերպության ծրագրերի մշակման ղեկավար
Վ. Ավակովա	«ԱՄՔՈՐ» հայկական մասնաճյուղի թրաֆիքինգի

	դեմ պայքարի ծրագրերի համակարգող
Ս.Երանոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ

(հանձնաժողովի քարտուղար)

Սույն թվականի սեպտեմբերի 18-ին տեղի ունեցած Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ֆ. Բերիկյանը, ներկայացրեց օրակարգը և խոսքը փոխանցեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ տիկին Ա.Թանաշյանին՝ **օրակարգի առաջին հարցը ներկայացնելու համար**: Ա.Թանաշյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց նախորդ նիստում կայացած որոշման արդյունքները, ըստ որի Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական խմբի կազմը կարծիքի էր ներկայացվել բոլոր շահագրգիռ կողմերին. առարկություններ և առաջարկություններ այդ կապակցությամբ չէին ստացվել: Նա ևս մեկ անգամ նշեց հանձնաժողովին կից նման աշխատանքային խմբի ստեղծումը, հիմնավորելով այն հանձնաձողովի կարգավիճակի, կանոնադրական խնդիրների և գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված աշխատանքների համակարգման տեսանկյունից: Նա, անդրադարձավ նաև փորձագիտական խմբի հետագա գործունեությանը, մասնավորապես առաջիկայում մշակվելիք միջոցառումների փաթեթին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ առաջարկությամբ հանդես եկավ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ տիկին Ն.Դուրյանը մասնավորապես՝ առաջադրելով իր տեղակալ Ա.Վարդանյանի թեկնածությունը՝ աշխատանքային խմբի կազմում ընդգրկելու նպատակով: Աշխատանքային խմբի գործառույթների, հետագա գործունեության և խմբի կազմի առնչությամբ կարծիք հայտնեց ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գ.Հայրապետյանը՝ նշելով, որ քննարկվող խնդիրը հասարակական է և բազմաոլորտային, ինչն էլ անհրաժեշտություն է առաջացրել աշխատանքային խմբի կազմում այսքան շատ գերատեսչություններ ընդգրկել: Հանձնաժողովի կողմից ընդունվեց Ն.Դուրյանի առաջարկը:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ տիկին Կ.Սարիբեկյանը: Նա հանձնաժողովին ներկայացրեց Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով իրականացվող օրենսդրական բարեփոխումների նախաձեռնության անհրաժեշտության նախադրյալները, մասնավորապես, նշեց, որ մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ են դրվել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (այսուհետ՝ օրենքների նախագծեր): Նա նշեց, որ օրենքների նախագծերի մշակման և հետագայում ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետությունում սեռով պայմանավորված հղիության ընդհատումների թվի աճով, ինչն էլ լուրջ ժողովրդագրական սպառնալիք է Հայաստանի Հանրապետության համար: Այնուհետև նշեց, որ համաձայն այդ նախագծերի՝ բուժաշխատողին (բժիշկ, բուժքույր) արգելվում է մինչև հղիության 30 շաբաթը լրանալը ապագա երեխայի սեռի վերաբերյալ գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ եղանակով տվյալներ ներկայացնել հղի կնոջը կամ նրա ընտանիքի անդամներին (ամուսին, քույր, եղբայր, հայր, մայր, երեխա) կամ երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն կամ այլ բժշկական կամ սոցիալական ցուցումներ: Այդ տվյալների տրամադրումը կառաջացնի տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից երեքհարյուրապատիկի չափով, իսկ արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

Կ.Սարիբեկյանը հայտնեց, որ ծնունդների բնականոն համարվող սեռային հարաբերակցության շեղումները ներկայում Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր սահմանագծի են հասել: Այսպիսով, պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, ներկայում ծնվում է 100 աղջիկ՝ 104 տղա նորածինների հարաբերակցությամբ: Ավելին, երկրորդ, երրորդ և հաջորդ երեխաների դեպքում ցուցանիշը շատ ավելի բարձր է. օրինակ՝ երկրորդ երեխայի դեպքում սեռային հարաբերակցությունը կազմում է 100 աղջիկ նորածին՝ 116 տղա նորածինների հաշվով և երրորդ երեխայի դեպքում՝ 105 աղջիկ նորածին՝ 160/168 տղա նորածինների հաշվով: Նա ուշադրություն հրավիրեց հետևյալ կարևոր փաստերի վրա. այն, որ տարեկան 1500-2000 աղջիկ չի ծնվում սեռի պատճառով և, որ ծնունդների նման սեռային հարաբերակցության հետագա շարունակումը կհանգեցնի գենդերային բնականոն հարաբերակցության խզման, ինչի արդյունքում էլ մինչև 2060 թվականը չի ծնվի մոտավորապես 100.000 աղջիկ երեխա: Այնուհետև, նա նշեց սելեկտիվ աբորտների երեք հիմնական պատճառները, որոնք շատ տարածված են Հայաստանի Հանրապետությունում:

Դրանք են՝

1. Ծնելիության ցածր ցուցանիշը/ ծնելիության անկումը,
2. Ավանդական արժեհամակարգում տղա երեխային՝ որպես հետնորդ ընտրելու կարծրատիպը/ տղա երեխայի գերապատվությունը,
3. Երեխայի սեռի ընտրության տեխնոլոգիաների հասանելիությունը:

Կ.Սարիբեկյանը նշեց նաև, որ վերոնշյալ օրենքների նախագծերի հաստատման ժամկետները երկարաձգվել են մինչև 2015 թվականի առաջին կիսամյակ՝ դրանք առավել լայն շրջանակներում քննարկելու, հանրապետությունում սեռերի անհամամասնության կանխարգելմանը, ծնելիության խթանմանը, ինչպես նաև կարծրատիպերի վերացմանն ուղղված համալիր միջոցառումներ մշակելու նպատակով:

Հանձնաժողովի անդամները, մասնավորապես, Ֆ. Բերիկյանը, Ա.Թանաշյանը, Գ.Հայրապետյանը, Վ.Ասատրյանը հանդես եկան կարծիքներով և մեկնաբանություններով: Նրանք անդրադարձան նախգծերից բխող բացասական հետևանքներին, կոռուպցիոն ռիսկերին, վերահսկման մեխանիզմների անկատարությանը, սեռի որոշման և հղիության ընդհատման այլ տեխնոլոգիաներին, ինչպես նաև ծնելիության խթանմանն ուղղված սոցիալական աջակցության համակարգի առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ պարոն Գ.Հայրապետյանը: Նա, կարևորելով Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով իրականացվող օրենսդրական բարեփոխումները, անդրադարձավ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ 2014 թվականի մայիս ամսվա կեսերին ՀՀ Ազգային Ժողովում կայացած հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Նա նշեց, որ քննարկմանը մասնակցել են ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի անդամները, ինչպես նաև ՀՀ ԱԺ տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ, ովքեր նույնպես այս հարցով խիստ հետաքրքրված են և առաջիկայում նրանք հանդես կգան նոր առաջարկություններով՝ Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելելու նպատակով: Այնուհետև, նա վկայակոչեց մի շարք երկրների փորձը, որտեղ կիրառել են նման արգելքներ:

Գ. Հայրապետյանի համոզմամբ այս հարցում մեծ է նաև Հայ առաքելական եկեղեցու դերը և պետք է գործի հասարակական կյանքին համահունչ: Եվ ավելացրեց, որ ներկայում եկեղեցին կազմակերպում է տարբեր քննարկումներ և պատրաստվում է 2015 թվականի կեսերին ներկայացնել իր կողմից մշակված հայեցակարգ՝ հասարակությանը հուզող խնդիրները վերհանելու և դրանց լուծում տալու նպատակով:

Գ. Հայրապետյանը նշեց նաև, որ օրենքների նախագծերը պարունակում են երկու կարևոր ուղերձ. այն է, որ սեռով պայմանավորված հղիության ընդհատումը վատ արարք է, որը պետք է պատժվի և այն, որ կառավարությունը կարևորում է առկա հիմնախնդիրը, ինչի արդյունքում էլ ձեռնարկում է համապատասխան քայլեր, որոնք ժամանակի ընթացքում կնպաստեն հասարակության վարքագծային փոփոխմանն ու իրավիճակի կարգավորմանը: Այնուհետև, նշեց, որ ներկայում մշակվում են ուղեցույցներ՝ բժիշկների, սոցիալական աշխատողների և եկեղեցական սպասավորների/հոգևորականների/ համար՝ յուրաքանչյուրն իր ոլորտում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

Նա տեղեկացրեց, որ Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների երևույթի վերհանման նպատակով Facebook.com սոցիալական ցանցում իրականացվել է «Ի՞սկ դու ունես աղջիկ» խորագրով ֆլեշ-մոբ/ակցիա/, որին առաջին 4 օրերի ընթացքում արձագանքել է 160.000 օգտատեր: Նա ուշագրավ փաստ համարեց այն, որ ակցիայի մասնակիցների զգալի մասը կազմել են աղջիկ երեխա ունեցող հայրերը:

Օրակարգի չորրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի պատասխանատու պարոն Ա.Այվազովը: Նա հանձնաժողովին ներկայացրեց Կանանց ռեսուրսային կենտրոնի և Ցյուրիխի համալսարանի համագործակցությամբ իրականցվող՝ Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների խորքային պատճառների ուսումնասիրությունը և դրա՝ ակնկալվող արդյունքները: Նա նշեց, որ հետազոտությունն ուղղված է բացահայտելու և հասկանալու վերոնշյալ երևույթը ծնող իրական դրդապատճառները: Նա տեղեկացրեց, որ հետազոտությունն իրականացնելու համար գործընկերների հետ համատեղ մշակվել է մեթոդաբանություն՝ վարքագծի որոշ քայլերի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով: Ա.Այվազովը նշեց, որ նախատեսվում է հետազոտությունն իրականացնել 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում և Երևան քաղաքում: Հետազոտության փորձագիտական գործընթացում ընդգրկվելու է տարբեր ընտանիքների շուրջ 1500 անձ՝ յուրաքանչյուր տարածաշրջանում՝ 500-ական անձ:

Հանձնաժողովի անդամները կարևորեցին հետազոտությունը, դրա արդյունքների լուսաբանումը, հատկապես՝ քաղաքականություն մշակողների և մասնագետների շրջանում:

Օրակարգի հինգերորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ պարոն Վ.Ասատրյանը: Նա հանձնաժողովին ներկայացրեց Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, «Փրկեք երեխաներին» կազմակերպության, ինչպես նաև Արմավիրի զարգացման կենտրոնի և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպության համատեղ՝ «Հայաստանում երեխայի սեռի կանխակալ ընտրության դեմ պայքարի» ծրագրային առաջարկը և տեղեկացրեց, որ այն հաղթել է Եվրոպական միության կողմից հայտարարված խտրականության դեմ պայքարի ծրագրային համաշխարհային մրցույթում, ինչպես նաև՝ ընթացքում է ՄԶՄԿ-ի և Հայաստանում ԵՄ պատվիրակության միջև ծրագրի շնորհման պայմանագրի ստորագրման նախապատրաստական գործընթացը: Նա նշեց, որ երկամյա ծրագիրն ուղղված է հայաստանցիների շրջանում խնդրի վերաբերյալ գիտելիքների, վերաբերմունքի և ընկալումների դրական փոփոխություններին, ինչպես նաև սեռով պայմանավորված աբորտների առնվազն 10 տոկոսով կրճատմանը:

Վերոնշյալ արդյունքներին հասնելու համար ՄԶՄԿ-ն և գործընկեր կառույցները նախատեսում են փոխկապակցված գործողություններ և միջոցառումներ իրականացնել երեք հիմնական ուղղություններով:

Մասնավորապես՝

1. Նախատեսվում է ապահովել պետական կառավարման մարմինների մարզային կառույցներին, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպություններին, համայնքային գործիչներին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով, ինչպես նաև երեխայի սեռի կանխակալ ընտրության բացասական հետևանքների ամբողջական ընկալմամբ:

2. Նախատեսվում է երեխայի սեռի կանխակալ ընտրության հանդեպ բնակչության շրջանում ձևավորել համապատասխան ընկալումներ և վերաբերմունք:

3. Նախատեսվում է աջակցել երեխայի սեռի կանխակալ ընտրության կանխարգելմանն ուղղված քաղաքականության շրջանակների զարգացմանը:

Ծրագրի միջոցառումները, մասնավորապես ներառում են քաղաքականության վերլուծության և խորհրդատվության, հետազոտությունների, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ուսուցման և վերապատրաստման, իրազեկության բարձրացման և շահերի պաշտպանության մի շարք գործողություններ:

Հանձնաժողովի անդամները հանդես եկան կարծիքներով և մեկնաբանություններով՝ կարևորելով վերոնշյալ ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ հաստատել Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովին կից Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական աշխատանքային խմբի կազմը ըստ ներկայացված ցանկի (կցվում է):
2. Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Կ.Սարիբեկյանի ելույթը՝ կապված օրենսդրական բարեփոխումների հետ:
3. Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Գ.Հայրապետյանի հաղորդումը:
4. Օրակարգի չորրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին իրականացվելիք հետազոտությունների վերաբերյալ Ա.Այվազովի հաղորդումը:
5. Օրակարգի հինգերորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Վ.Ասատրյանի հաղորդումը:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**
/24.09.2014թ./

Կազմ
Հայաստանում նորածինների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման փորձագիտական խմբի

Արմենուհի Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ
Գայանե Ավագյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մայրության և վերարտադրության բաժնի պետ
Մարինե Աղաջանյան	ՀՀ կրթության եվ գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիտորինգի վարչության գլխավոր մասնագետ
Քնարիկ Մկրտչյանին	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության դատական ակտերի հարկադիր կատարման և քրեակատարողական համակարգերի օրենսդրական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Անուշ Սուքիասյան	ՀՀ Ազգային Ժողովի առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ
Արթուր Վարդանյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետի տեղակալ
Աննա Սաֆարյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կանանց հարցերով պատասխանատու
Գարիկ Հայրապետյան	ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ
Ծովինար Հարությունյան	ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի ծրագրերի պատասխանատու
Միեր Մանուկյան	ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի հաղորդակցության գծով օգնական
Արթուր Այվազով	ՄԱՄՀ ծրագրավորման բաժնի ղեկավար
Գայանե Փանոսյան	<<Փրկեք երեխաներին>> բարեգործական կազմակերպության
Վիկտորիա Ավակովա	«ԱՄՔՈՐ» հայկական մասնաճյուղի թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերի համակարգող
Ինգա Հարությունյան	Վորլդ Վիժն Հայաստանյան գրասենյակի գենդերային հարցերով պատասխանատու
Վահան Ասատրյան	<<Մարդկային զարգացման միջազգային կենտրոն>> վերլուծական կենտրոնի փորձագետ
Սուսաննա Վարդանյան	«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի տնօրեն
Տաթևիկ Աղաբեկյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի ծրագրերի

	պատասխանատու
Ահարոն Ադիբեկյան	«Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն ՍՊԸ-ի տնօրեն
Գրիգոր Աղանյան	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
Համլետ Սարգսյան	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
Մխիթար Գաբրիելյան	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող